



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000042

Զեռնարկողը՝

«Վ.Է.Վ.» ՍՊԸ

Տավուշի մարզ, ք. Իջևան,  
Արցախյան 94/2

Գործունեությունը՝

Հովքի քաղցրահամ ջրի թիվ 1 և 2 աղբյուրների  
հիդրոերկրաբանական ուսումնասիրության աշխատանքների  
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայկ

Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Դոնոյան



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱՌՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 000042

05 ' 06 2019թ.

**Տավուշի մարզի Հովքի քաղցրահամ ջրի թիվ 1 և 2 աղբյուրների հիդրոէրկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

<<Վ. Է. Վ.>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ  
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Տավուշի մարզ, Հովք համայնք

Տավուշի մարզի Հովքի քաղցրահամ ջրի թիվ 1 և 2 աղբյուրների հիդրոէրկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակն է ուսումնասիրել տեղամասում գոյություն ունեցող քաղցրահամ ջրի երկու աղբյուրների ռեժիմը տարեկան կտրվածքով՝ ելակետային հիդրոէրկրաբանական պարամետրեր ստանալու համար.

- կատարել լաբորատոր ուսումնասիրություններ՝ գնահատելու քաղցրահամ ջրի աղբյուրների որակական հատկանիշները,

- կատարել տեղամասի մշտական բնույթ ունեցող քաղցրահամ ջրի աղբյուրների շահագործողական պաշարների հաշվարկում «Բ» կարգով:

Իրականացվող հիդրոէրկրաբանական ուսումնասիրության արդյունքների՝ ֆոնդային նյութերի և դաշտային աշխատանքների ստացված տվյալների, հիման վրա կազմվելու է հաշվետվություն մշտական բնույթ ունեցող աղբյուրների շահագործողական պաշարների հաշվարկմամբ և ներկայացվելու է էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն: Աշխատանքների կատարման ժամկետները մեկնարկելու են 2019թ.-ի 2-րդ եռամյակին, իսկ ավարտը նախատեսվում է 2020թ.-ի 1-ին եռամյակին:

Հետախուզվող տեղամասը վարչատնտեսական առումով գտնվում է Տավուշի մարզի Հովքի վարչական տարածքի արևելյան ծայրամասում, Աղստև գետի միջին հոսանքի ավագանում, Հովք գյուղից՝ թիվ 1 աղբյուրը 2.6կմ դեպի հյուսիս-արևելք, իսկ թիվ 2 աղբյուրը՝ 3.3կմ հարավ-արևելք: Հետախուզվող թիվ 2 աղբյուրը գտնվում է թիվ 1 աղբյուրից 1.6կմ դեպի հարավ: Հետախուզվող տարածքը գբաղեցնում է 0.5հա մակերես, այդ թվում թիվ 1 աղբյուրի տեղամասը՝ 0.35հա, թիվ 2 աղբյուրի տեղամասը՝ 0.15հա: Տեղամասի ամենամոտ բնակավայրերը Հովք, Աղդան, Գոշ, Գանձաքար, Աղևանավանք գյուղերն են, որոնք միմյանց հետ կապված են ասֆալտապատ ճանապարհներով: Հովքի քաղցրահամ ջրի թիվ 1 աղբյուրի տեղամասը տեղակայված է 1050-1075մ, իսկ թիվ 2 աղբյուրի տեղամասը՝ 850-870մ բացարձակ բարձրությունների վրա: Հետախուզվող տեղամասերը սահմանափակվում են հետևյալ ծայրակետային կոորդինատներով:



ARM WGS-84 կոորդինատների համակարգով		
C/h	X	Y
<b>Թիվ 1 աղբյուրի տարածք (S=3549մ<sup>2</sup>)</b>		
4516019	8505841	
4516044	8505823	
4516044	8505884	
4515976	8505884	
4515976	8505821	
<b>Թիվ 2 աղբյուրի տարածք (S=1494մ<sup>2</sup>)</b>		
4517537	8505241	
4517537	8505281	
4517498	8505282	
4517498	8505241	
4517522	8505245	

Տեղամասի շրջանում զարգացած են չորրոդական, ժամանակակից հասակի նստվածքային և հրաբխածին նստվածքները, որոնցում ձևավորվել են ոչ ճնշումնային ծակոտկեն ու ծակոտկեն-ճեղքավորված և ծակոտկեն-շերտածն-ճեղքավորված ճնշումնային ջրատար հորիզոններում: Ծակոտկեն ոչ ճնշումնային ջրերը զարգացած են Աղստև գետի ժամանակակից այսովհալ և մերձափնյա լճային առաջացումներում: Տարածքը հարուստ է ինչպես քաղցրահամ, այնպես էլ հանքային ջրերով, որոնք իրարից տարբերվում են իրենց քիմիական կազմով, հանքայնացմամբ, տեղադրման պայմաններով, հիդրոդինամիկ պայմաններով և այլն:

Ուսումնասիրվող աղբյուրները տեղակայված են թույլ ջրակայուն ապարների գոտում, որտեղ ջրերի ինֆիլտրացիան տատանվում է 0.0000019մ/օր-ից մինչև 0.058մ/օր սահմաններում, իսկ ջրի հոսքի մոդուլը 1.0կմ<sup>2</sup> մակերեսի վրա տատանվում է 0.34-ից 1.5/վրկ սահմաններում: Այստեղ ջրերը տարածված են ճեղքավորված ապարների հողմահարված գոտում:

Ներկայացվող ծրագրով նախատեսվում է իրականացնել հիդրոերկրաբանական հետախուզական աշխատանքներ Հովքի քաղցրահամ թիվ 1 և 2 աղբյուրներում, որոշել վերջիններիս ինչպես ջրի ծախսը, այնպես էլ պարզել դրանց որակական, ֆիզիկական և կենսաբանական հատկանիշները խմելու ջրի համար՝ հետագայում շահագործելու նպատակով:

Ծրագրով նախատեսվող աշխատանքների հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների մեթոդիկայի և ծավաների ընտրությունը կատարվել է ելնելով ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններից, երկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների աստիճանից: Ըստ հայտի նախատեսվում է իրականացնել հետևյալ հիդրոերկրաբանական աշխատանքները.

- ֆոնդային նյութերի հավաքագրում և մշակում,
- դաշտային հիդրոերկրաբանական երթուղիներ,
- աղբյուրների ելքի կահավորում (կապտած),
- ստացիոնար հիդրոերկրաբանական ռեժիմային դիտարկումներ,
- լաբորատոր աշխատանքներ,
- աշխատանոցային (կամերայի) աշխատանքներ:

Դաշտային հիդրոերկրաբանական աշխատանքների համար եզրագծված տեղամասում ծրագրով նախատեսվում է կատարել 1.6կմ երթուղիներ՝ թիվ 1 աղբյուրի և



թիվ 2 աղբյուրի տեղամասերում, որի ընթացքում կնկարագրվեն տեղամասերում գոյություն ունեցող մշտական բնույթի աղբյուրները, կտրվի այդ աղբյուրների հակիրճ երկրաբանական և հիդրոերկրաբանական բնութագիրը, տիպը, կապտաժի և աղբյուրի սանիտարական վիճակի նկարագրությունը, տեղեկություններ աղբյուրի ռեժիմի և օգտագործման մասին: Արդյունքում կկազմվի 1:1000 մասշտաբի տեղամասի սխեմատիկ հիդրոերկրաբանական քարտեզ:

Սկզբնական ակնադիտական երթուղիների ժամանակ պարզվել է, որ աղբյուրների ելքերն անհրաժեշտ է կահավորել եռանկյուն ջրթափով, որպեսզի հնարավոր լինի իրականացնել ռեժիմային դիտարկումներ: Զրակետերում չափումները հնարավոր է իրականացնել երկրի մակերևույթի վրա աղբյուրի ջրերը բռնելու, հավաքելու և կենտրոնացնելու համար նախատեսված ջրհավաք կառուցի միջոցով:

Հաշվի առնելով տեղամասում գոյություն ունեցող աղբյուրների ջրաելքերի ծախսերի մեծությունները՝ դրանց ելքերը կկահավորվեն մինչև 76մմ տրամագծի խողովակներով կամ եռանկյուն ջրթափով: Աղբյուրների ելքերում անհրաժեշտ կլինի կատարել դրանց քարաբեկորներից, խճերից, ավազներից և կավերից մաքրման աշխատանքներ՝ շուրջ 1.0մ<sup>3</sup> հողային և 1.0մ<sup>3</sup> բետոնային ծավալով յուրաքանչյուր աղբյուրի համար: Մաքրման աշխատանքներից հետո աղբյուրի ելքը կկահավորվի եռանկյուն ջրթափով: Ի նկատի ունենալով այլ կազմակերպությունների նախորդ տարիների աշխատանքային փորձը՝ 2.0մ<sup>3</sup>-ի բետոնային աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 400.0կգ տամպոնաժային ցեմենտ, 2.0մ<sup>3</sup> ավազ և 0.4մ<sup>3</sup> տախտակ: Չի բացառվում, որ հիդրոերկրաբանական երթուղիների ընթացքում կարող են հայտնաբերվել նոր մշտական բնույթ ունեցող աղբյուրներ, որոնք ևս կկահավորվեն՝ խողովակներով՝ հիդրոերկրաբանական ռեժիմային դիտարկումներ կատարելու համար: Աղբյուրի ելքի մաքրման, բետոնային և ջրթափով կահավորման աշխատանքների համար կպահանջվի 135000 դրամի ծախս յուրաքանչյուր աղբյուրի համար:

Ռեժիմային դիտարկումներ կանցկացվեն առնվազն մեկ տարվա տևողությամբ և ամսական երեք անգամ չափումների հաճախականությամբ, որն ապահովում է շահագործական պաշարներ «B» կարգի հաշվարկումը: Յուրաքանչյուր դիտարկման ժամանակ չափվելու է ջրի ծախսը և ջերմաստիճանը: Ամեն ամիս յուրաքանչյուր աղբյուրից վերցվելու է ջրի 3 նմուշ լրիվ քիմիական անալիզի համար (6 նմուշ երկու աղբյուրի համար): Բացի այդ, տարեկան կտրվածքով, յուրաքանչյուր աղբյուրից կվերցվի 4 նմուշ ստուգիչ անալիզի և 2 նմուշ մանրէաբանական անալիզի ցուցանիշների որոշման համար:

Այսպիսով տարեկան կվերցվի 84 նմուշ, այդ թվում 72 նմուշ լրիվ անալիզի համար, 8 նմուշ ստուգիչ անալիզի համար և 4 նմուշ մանրէաբանական անալիզի համար:

Հարորատոր ուսումասիրությունների միջոցով ռեժիմային դիտարկումների վերջին փուլում կիրականացվի՝ 200.0մ<sup>3</sup> ծավալով, քաղցրահամ ջրի փորձնական արդյունահանում /շաբաթում/, որպեսզի հնարավոր լինի պարզել ջրի որակական, ֆիզիկական և կենսաբանական հատկանիշների պահպանման աստիճանը՝ շաբաթում պայմաններում:

Կատարված հիդրոերկրաբանական ուսումնասիրություններից ստացված տվյալների հավաքագրման, գրաֆիկների, այլուսակների և քարտեզների կազմման և ելակետային տվյալների մշակման և ամփոփումը հնարավորություն կնծեոնի գնահատելու աղբյուրներում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները: Արդյունքում կկազմվի հաշվետվություն ուսումնասիրվող մշտական բնույթ ուսուցող աղբյուրների շահագործողական պաշարների հաշվարկմամբ, որը կներկայացվի ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների փորձաքննության ու հաստատման համար:



Դաշտային հիդրոերկրաբանական աշխատանքների համար եզրագծված տեղամասերը անտառապատ են: Աղբյուրների տեղամասերում և դրանց հարակից շրջակայքում չկան խոշոր արդյունաբերական և տնտեսական, բնակելի շինություններ, որոնք կիսանգարեն ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը, կամ էլ ուսումնասիրության աշխատանքները կվնասեն այդ շինություններին: Հաշվի առնելով աշխատանքների բնույթը և իրականացման եղանակները, տեղամասում հիդրոերկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա բացառվում է:

Ընկերության կողմից Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների հիդրոերկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ թափոնների օբյեկտի ստեղծում չի նախատեսվում և չի տրվում վերջինիս սահմանների նկարագրություն:

Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների հիդրոերկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ կարող են առաջանալ հետևյալ թափոնները.

- Կենցաղային աղբ (թուղթը, սննդի մնացորդը, փաթեթավորման տոպրակները, շտեղին պլաստմասա և այլն), որոնք կուտակվելու են հատուկ աղբի տոպրակների մեջ (առավելագույնը 35լ օրական) և յուրաքանչյուր օր տեղափոխվելու են Հովհաննեսի բնակավայրում առկա  $0.7\text{մ}^3$  տարողությամբ մետաղյա աղբամաններ, որտեղից էլ շրջանի աղբավայր:
  - Նավթամթերքների և քայուղերի թափոններ, որոնք կպահեստավորվեն հատուկ տակառներով կամ կոնտեյներներում՝ մեկուսացված հարթակների վրա:
  - Շինարարական աղբ, որոնք կառաջանան շինարարական աշխատաքնների ժամանակ: Այս թափոնները ևս վտանգ չեն ներկայացնում, քանի որ շինարարական աշխատանքներից հետո ընկերության աշխատակիցների կողմից շինանյութերի մնացորդները կիեռացվի աղբյուրների տարածքից, տարածքը կմաքրվի և կբարեկարգվի: Նոր ճանապարհների կառուցում կամ նորոգում չի նախատեսվում, քանի որ դեպի աղբյուրներ տանող ճանապարհները բարենպաստ են: Ուեկովտիվացիոն աշխատանքներ ծրագրով չեն նախատեսված, միայն բնապահպանական ընթացիկ միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահատել 250.0հազ.դրամ:

Դիլիջանի համայնքապետարանում իրականացված հանրային քննարկումների, 14.05.2019թ. արտակարգ իրավիճակների նախարարության և 16.04.2019թ. <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի թիվ 01-10/61 համապատասխան գորությունների, ինչպես նաև փորձաքննական գործընթացում կատարված լրամշակումների, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքների հիման վրա կառելի է անել հետևյալ եղանակումները.

Նախատեսվող հիդրոերկրաբանական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող հնարավոր բացասական ազդեցությունները կինեն աննշան, կարճատև և տեղային:

Ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջացող արտանետումները կոնենան ժամանակավոր բնույթ և կառտանելումեն հարթակային առգրուներից:

Նախատեսվող գործունեության ընթացքում նախնական գնահատման հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածի աղտոտվածություն՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգունվի թույլատրելի նորմերի սահմաններում։ Ըստ հայտի՝ լուծված են աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, թափոնների կառավարման հարցերը։ Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բազարար միջոցառումներ։

Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների ժամանելով, մշակված բնապահպանական միջոցառումները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կունենա կարճատև և նվազագույն ազդեցություն՝ չգերազանցելով սահմանված նորմերը:

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

### Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է << օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ, մասնավորապես՝ անտառային հողատարածքներում աշխատելու թույլտվություն:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացնցից միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Վ.Է.Վ.>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Տավուշի մարզի Հովքի քաղցրահամ ջրի թիվ 1 և 2 աղբյուրների հիդրոերկրաբանական ուսումնասիրության աշխատանքների>> նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝



Կ. Մովսիսյան